ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արայիկ Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն, Փարիզ 2019թ նոյեմբերի 25-26-ը

4. Հրավիրող կողմը

Ֆրանսիայի Հանրապետության ազգային կրթության և երիտասարդության նախարար Ժան-Միշել Բլանքե

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ԵԽ անդամ երկրների կրթության նախարարների բարձրաստիճան համաժողովին

6. Քննարկված թեմաներ

1. Թվային գործիքների էթիկական կիրառումը և քննադատական մտածողության զարգացումն աշակերտների շրջանում,

2. Եվրոպայում պատմության դասավանդման օբզերվատորիայի (History Observatory for Peace in Europe - HOPE) հիմնում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Քննարկվել է Հայաստանում ֆրանսիական դպրոցի գործունեության, մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում համագործակցության և ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների գործընթացում փորձագետների ներգրավման վերաբերյալ հարցեր:

Անդրադարձ է եղել նաև Հայաստանում օտարերկրացիների համար ֆրանսերենի դասավանդման մեթոդներին և այդ հարցում ֆրանսիական կողմի աջակցությանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Փարիզում կայացել է հանդիպում մշակույթի, կրթության և գիտության ոլորտում մեծ ավանդ ունեցող հայրենակից մասնագետների հետ, որոնք պատրաստ են աջակցել մեր մշակույթի զարգացմանը: Արժևորվել է հայրենակիցների ձեռքբերումները, գիտելիքները և նրանց պատրաստակամությունը հայրենիքին աջակցելու հարցում: Քննարկվել են նաև ապագայի համատեղ նախագծեր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Ելույթի ժամանակ կարևորվել է օբզերվատորիայի հիմնման ֆրանսիացի գործընկերների նախաձեռնությունը, շեշտելով այն հանգամանքը, որ լինելով հարուստ պատմության և մշակույթի ունեցող ազգի ներկայացուցիչ գտնում է, որ պատմությունը կարևորագույն դեր է խաղում ժամանակակցի աշխարհում: Նշվեց նաև, որ օբզերվատորիան հնարավորություն կընձեռի անդամ երկրներին սահմանել մեթոդոլոգիական ուղեցույցներ, պատմությունը ուսումնասիրելու և դասավանդելու համար:

Նշվել է նաև, որ Հայաստանը կարևորում է Եվրոպայի Խորհրդի հետ սեղմ համագործակցությունը, մասնավորապես՝ մարդու իրավունքների և ժողովրդավարության զարգացման համար՝ կարևորելով 2018 թվականին ՀՀ-ում իրականացված թավշյա հեղափոխությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

28.11.2019